Երկրորդ ընթերցում
Նախագիծ
լրամշակված տարբերակ
Կ-876[1]-20.04.2010,01.06.2010-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսահետեւ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը լրացնել «ա»., «բ», «գ»., «դ»., ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

<<ա. այլընտրանքային կրթական ծրագիր - առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների և մեթոդների բազմազանություն առաջարկող կրթական ծրագիր, որը ապահովում է հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքները,

բ. հեղինակային կրթական ծրագիր - այլընտրանքային կրթական ծրագրի տեսակ, որը միջազգային չափանիշներով ճանաչված (վկայագրված) է որպես հեղինակային, կամ ստեղծված, մշակված և ներդրված է մանկավարժական որոշակի համակազմի կամ կառավարման մարմնի (ների) կողմից:

գ. փորձարարական կրթական ծրագիր - սահմանված կարգով որոշակի ժամկետով ներդրված այլընտրանքային կրթական ծրագիր, որի նպատակն է ապահովել կրթության կազմակերպման բազմազանությունը, միջազգային համագործակցությունը, կրթության արդյունավետ կազմակերպման համակարգերի բացահայտումը և ներդրումը.

դ. միջազգային կրթական ծրագիր - միջկառավարական կամ միջգերատեսչական համաձայնագրի հիման վրա կամ տասը և ավելի օտարերկրյա պետություններում իրականացվող այլընտրանքային կրթական ծրագիր,>>:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 9րդ մասում <<պահանջներին համապատասխան>> բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի>> բառերով։

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել 6.1–րդ մասով, հետևյալ բովանդակությամբ՝

<<6.1. Ուսումնական հաստատությունները կարող են օտար լեզուներով միջազգային կրթական ծրագրեր իրականացնել բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով։ Ուսումնական հաստատությանը՝ օտար լեզվով կրթություն իրականացնելու թույլտվություն տալու կարգը մշակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը։

Օտար լեզվով միջազգային կրթական ծրագրեր կարող են իրականացնել բացառապես ոչ պետական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև միջպետական, միջկառավարական համաձայնագրերով ստեղծված ուսումնական հաստատությունները։

Օտար լեզվով միջազգային կրթական ծրագրեր իրականցնող սույն մասով սահմանված ուսումնական հաստատություններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար հայոց լեզվի և հայագիտական առարկաների հայերենով ուսուցումը պարտադիր է՝ հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան։

Սույն մասում սահմանված ուսումնական հաստատությունների առավելագույն թիվը Հայաստանի Հանրապետությունում 11-ն է, որից

1) երկուսը կարող են ստեղծվել որպես ոչ պետական ուսումնական հաստատություններ Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում և կրթություն կազմակերպել առնվազն 6-րդ դասարանի հիմքի վրա (7-րդ դասարանից),

2) ինը կարող են ստեղծվել նաև միջպետական և (կամ) միջկառավարական համաձայնագրերի հիման վրա և իրականցնել միջնակարգ կրթության երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրեր։

Նույն օտար լեզվով միջազգային կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների առավելագույն թիվը 4-ն է։

Սույն մասում սահմանված ուսումնական հաստատությունները չեն կարող ունենալ մասնաճյուղ կամ ստորաբաժանում>>։

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Ամփոփաթերթիկ

<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Լեզվի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների փաթեթի վերաբերյալ Ազգային ժողովում 2-րդ ընթերցման ներկայացված առաջարկությունների մասին:

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1. ՀՀ կառավարություն ՀՀԿ խմբակցություն ԲՀԿ խմբակցություն ՕԵԿ խմբակցություն Ա. Բախշյան	1. Հաշվի առնելով օտար լեզվով հանրակրթական ծրագրերի իրականացման հարցի օրենսդրական կարգավորման շուրջ արտահայտված հանրային բազմակարծությունը, հայեցի լեզվամտածողության ձևավորման ձգտումը և ցանկություն ունենալով հասնել որակյալ ազգային կրթության համաչափ զարգացմանը՝ հարցը կարգավորել միայն <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով՝ օրենսդրական նախաձեռնության փաթեթից հանելով <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը:	1. Ընդունված է մասնակի. <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքում ներառված է հոդված, որով սահմանվում է, որ միջազգային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները սահմանվում են <<Հանրա-կրթության մասին>> ՀՀ օրենքով:
2. ՀՀ կառավարություն ՀՀԿ խմբակցություն ԲՀԿ խմբակցություն ՕԵԿ խմբակցություն	2.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում սահմանել <<այլընտրանքային կրթական ծրագիր>>, <<հեղինակային կրթական ծրագիր>>, <<փորձարարական կրթական ծրագիր>>, <<միջազգային	2. Ընդունված է

Ա. Բախշյան	կրթական ծրագիր>> հասկացությունները:	
3. ՀՀԿ խմբակցություն, ՕԵԿ խմբակցություն, ԲՀԿ խմբակցություն	3. Պահպանել կրթական ծրագրի իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնադրման սահմանափակումը և մարզային քվոտավորման սկզբունքը:	3. Ընդունված է
4. ՀՀ կառավարություն ՀՀԿ խմբակցություն ԲՀԿ խմբակցություն ՕԵԿ խմբակցություն Ա. Բախշյան	4.<<Լեզվի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում <<լեզուն գրական հայերենն է>> արտահայտությունից հետո «՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի>> արտահայտությունը փոխարինել վերջակետով:	4. Ընդունված է
5. Ա. Բախշյան	5. Երկրորդ մասը ձեւակերպել նոր խմբագրությամբ՝ «երկրորդ պարբերությունը ձեւակերպել հետեւյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետու-	5.Տվյալ հոդվածը ընդհանրապես օերնքի նախագծից հանված է

	թյան տարածքում հայերենի հենքի վրա նաեւ օտար լեզուներով նախամասնագիտական, մասնագիտական ուսումնական հաստատություն կարող է հիմնվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ>>:	: